ՆԱԽՇ-Ի-ՌՈՒՍՏԵՄԻ «ՔԱԱԲԱ Ի ԶԱՐԴՈՒՇՏ» ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ*

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

III դարը Հայաստանի պատմության ամենամութ շրջաններից մեկն է։ Մենք այդ ժամանակաշրջանի համար չունենք ժամանակակից աղբյուր, իսկ հետագա աղբյուրների տեղեկությունները շատ համառոտ են, խառնաշփոթ և մասամբ էլ միտումնավոր։ Այդ բացը մեծ մասամբ լրացնելու է գալիս վերջերս գտնված մի վերին աստիճանի կարևոր և ուշագրավ փաստաթուղթ։ 1936—1939 թթ. Պերսեպոլիսից հյուսիս գտնվող Նախշ-ի-Ռուստեմի ժայռին՝ առընթեր, բաց դաշտում բարձրացող «Քաաբա ի Զարդուշտ» կոչվող մի քառանկյունի շինության դրսի պատերի վրա գտնվել է պարսկերեն, պահլավերեն և հունարեն փորագրված արձանագրություն, որը, ինչպես ապացուցեց Վ. Բ. Հեննինգը[1], հաղորդում է Սասանյան արքայից-արքա Շապուհ Ա-ի (241—272) թագավորության ժամանակ տեղի ունեցած նշանավոր դեպքերի մասին։ Արձանագրությունը այս դեպքերը կապում է Շապուհ Ա-ի անձնավորության հետ, իբրև նրա սխրագործությունները, որը և հիմք է տվել Մ. Ի. Ռոստովցևին այդ հուշարձանը անվանելու Res gestae divi Saporis, *ինչպես և ընդունված է այն կոչել գիտության մեջ։ Բելգիացի գիտնականներ Հոնիգմանը և Մարիկը մանրամասն ուսումնասիրել են հիշյալ արձանագրության տվյալները, հիմնական ուշադրություն դարձնելով հունարեն բնագրի վրա[2]։*

Մեզ հետաքրքրող արձանագրության Հայաստանի մասին տվյալներին առաջին անգամ անդրադարձել է Հայկ Պերպերյանը իր «Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի» հոդվածում, որտեղ հիմնական ուշադրությունը բևեռում է III դարի կեսերին Հայաստանում թագավորած Արտավազդ Ե-ի վրա։ Հեղինակի ուշադրությունը գրավում է այն հանգամանքը, որ «Քաաբա ի Զարդուշտ»-ի արձանագրության մեջ իբրև «մեծ արքա Հայաստանի» հիշատակվող Որմիզդ-Արտաշիրի անունը հռոմայեցի պատմագիր Տրեբելլիոս Պոլլիոնի մոտ պահպանվել է «Որոմազդէս» ձևով։ Անունների այս նույնությունը առիթ է տալիս Հայկ Պերպերյանին հարց դնելու «արդյոք այս Արտավազդ անունը ձեռագրական վրեպ մը չէ՞ Որոմազդէս անունին»[4]։ Ստորև կտեսնենք, որ նրա այս կասկածը չի հիմնավորվում, իսկ նորագյուտ արձանագրությունը այս ժամա-

---

* *Զեկուցվել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի՝ ակադ. Հակոբ Մանանդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական սեսիայում, 1963 թ. դեկտեմբերի 10-ին։*

[1] W. B. Henning, The great Inscription of Sabur I. BSOS, vol. IX (1939)՝ *էջ 823—849։*

[2] Ernest Honigmann et André Maricq, Recherches Sur les Res Gestae divi saporis (*այսուհետև՝* Res gestae), Bruxelles, 1953, *էջ 3—4։*

[3] *Տե՛ս «Զվարթնոց», II, 1944, էջ 167—173։*

[4] *Նույն տեղում, էջ 172։*

նակաշրջանի Հայաստանի պատմության շատ ավելի կենճոտ ու մութ խնդիրներ է լուսաբանում, քան այդ կարծում է հարգելի հոդվածագիրը։

Res gestae-ն փորագրվել է 262 թ. մոտերքը[5] և պարունակում է տեղեկություններ, որոնք դալիս են ապացուցելու Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ դրքի 71—79 գլուխները բովանդակող հիմնական փաստերի պատմականությունը։ Մովսես Խորենացու Պատմության հիշյալ գլուխները նվիրված են III դարի պատմական դեպքերի նկարագրությանը, երբ Մեծ Հայքի գահի վրա իբրև ժառանգական գահակալներ նոր էին հաստատվել հայ Արշակունիները։ Հայ Արշակունիների իշխանությունը դեռևս չէր ամրապնդվել երկրում, երբ հարևան Իրանում վերացավ Պարթև Արշակունիների դինաստիան և նրան փոխարինեցին պարսկական հնամենի ավանդները նորից վերհիշած Սասանյանները։ Արտաքուստ այսպես դրսևորվեցին քաղաքական կյանքում ներքին այն պրոցեսները, որոնք ճանապարհ էին բացելու սոցիալական նոր ուժերին և երկիրը տանելու էին դեպի նոր ձևավորվող ֆեոդալական հասարակարգը։

Սասանյանների հզորացումը բարդ քաղաքական իրադրություն է ստեղծում Մերձավոր Արևելքում, որտեղ Հռոմեական կայսրությունը հարկադրված էր գիջել իր դիրքերը նոր քաղաքական ուժին, որ ավելի ևս նպաստում էր անտիկ հասարակարգի ներքին ճգնաժամի խորացմանը։ Ստեղծված պայմաններում Հայաստանը պիտի լարեր բոլոր ուժերը իր անկախությունը պահպանելու համար։ Սակայն բավական երկար ժամանակով Սասանյաններին հաջողվում է վերացնել հայ Արշակունիների իշխանությունը և Մեծ Հայքը կառավարել իրենց կողմից նշանակված կառավարիչներով։ Հայ Արշակունիների ժառանգական իշխանության անկայուն վիճակի և մասամբ բացակայության այս մոտ 50 տարվա (237—287 թթ.) ժամանակաշրջանը Մովսես Խորենացին դիտում է իբրև «Ժամանակս անիշխանութեանն»[6]։ Ահա քաղաքական այս անկայուն ժամանակաշրջանին են վերաբերում Res gestae-ի վկայությունները Հայաստանի մասին։

Res gestae-ում տրվում է քաղաքական դեպքերի թվարկումը Շապուհ Ա-ի գահակալության առաջին քսան տարիների ընթացքում՝ 242 թ. մինչև 262 թ.։ Ըստ արձանագրության բնագրի, դեպքերը դասավորվում են հետևյալ կերպ. ա) Նոր գահ բարձրացած Շապուհ Ա-ի (241—272) դեմ արշավում է հռոմեական կայսր Գորդիանոս Ը-ն (238—244), որը դիմադրության չհանդիպելով հասնում է մինչև Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնի մատույցները, Միսիխես կամ Բեթ-Մաշկենե վայրը։ Այստեղ 244 թ. փետրվարի 11-ին տեղի է ունենում մեծ ճակատամարտ, որտեղ հռոմեական զորքը մատնվում է խայտառակ պարտության, իսկ տակավին պատանի կայսր Գորդիանոս Ը-ն սպանվում է և, ինչպես երևում է, նրա դիակը գերի է ընկնում պարսիկների ձեռքը։ Հռոմեական բանակը կայսր է հռչակում Փիլիպպոս Արաբին (244—249), որը իր դավանանքով քրիստոնյա էր։ Նոր կայսրը 245 թ. խաղաղության դաշն կնքեց, վճարելով 500 հազար դինար ռազմատուգանք։ Ինչպես կարելի է կռահել արձանագրության տվյալներից, այդ գնով նա կարողացել է վերադարձնել պարսիկների մոտ գերի ընկած հռոմեական ռազմիկներին և, ըստ երևույթին, նաև

5 Նույն տեղում, էջ 88—90։

6 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոցն», II, Հե. Տփղիս. 1913, էջ 214։

սպանված Գորդիանոս Գ-ի դիակը։ Գորդիանոս Գ-ը թաղվել է Զայիթա վայրում, Եփրատի ափին, և նրա գերեզմանի վրա կառուցվել է դամբարան, որը տեսել էր դեռևս Ամմիանոս Մարկելլինոսը[7]։

Այս փայլուն հաղթանակը նշանավորելու համար Շապուհ Ա-ն ճակատամարտի վայր Միսիխես քաղաքը անվանել է «Պերոզ-Շապուհը» կամ, ինչպես հայկական աղբյուրներն են ավանդում՝ «Պերոզ-Շապուհ»[8], որ նշանակում է «Հաղթական Շապուհ» (այժմյան Սեյխան գյուղը Բաղդադից հյուսիս)[9]։

Այլ կերպ են դեպքերը լուսաբանում հռոմեական պատմիչները։ Նրանք լռության են մատնում Պերոզ-Շապուհի ճակատամարտը և Գորդիանոս Գ-ի սպանությունը այնտեղ, և վերջինիս մահը վերագրում են պրետորիանների պրեֆեկտ Փիլիպպոս Արաբին, որը ձգտում էր հաղնել նրա կայսերական ծիրանին։ Անշուշտ նախապատվությունը պիտի տալ Շապուհ Ա-ի արձանագրությանը, չնայած որ նա ևս զերծ չէ չափազանցություններից։ Օրինակ, վերջինս հաղորդում է, որ նորընտիր Փիլիպպոս կայսրը «մեզ (այսինքն՝ արքայից արքային) հարկատու դարձավ», որ ճիշտ չպետք է լինի։

245 թ. դաշնագիրը իր բնույթով պետք է համանման լիներ 363 թ. Հովիանոսի «ամոթալի» դաշնագրության, երբ «հռոմեական կայսեր բարեկամ ու դաշնակից» Հայաստանը ու նրա թագավորը մատնվեցին բախտի բմահաճույքին։

Ակադ. Հակոբ Մանանդյանը, անդրադառնալով այս հարցին, բերում է Զոնարասի, Զոսիմոսի և Եվագրիոսի տեղեկությունները, որոնցից երևում է, որ Հայաստանը Փիլիպպոսը զիջեց պարսիկներին և բնորոշ է, որ Զոսիմոսը (III, 32, 4) 245 թ. դաշնագիրը բնորոշում է իբրև «ամենաամոթաբեր հաշտություն»։ Եվագրիոսը (Hist. ecclesiastica, V, 7) պարզ ասում է, որ «Մեծ Հայքը առաջ հռոմայեցիների հպատակն էր, բայց Փիլիպպոսը, հաջորդելով Գորդիանոսին՝ տվեց այն Շապուհին, որով Փոքր Հայքը հռոմայեցիների ձեռքը մնաց, իսկ մյուս բոլոր մնացածը՝ պարսիկների»[10]։ Մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է կռահել, որ Մեծ Հայքում շարունակել է թագավորել Տրդատ Արշակունին, անշուշտ, ճանաչելով իր կախվածությունը Շապուհ Ա-ից։

Խաղաղությունը Հռոմի և Սասանյան Իրանի միջև տևել է ընդամենը 4—5 տարի։ Res gestae-ից երևում է, որ այս անդամ խաղաղությունը խախտել են հռոմայեցիները և առիթը եղել է Հայաստանը։ Արձանագրության բառերով ասած՝ «Կեսարը նորից խախտեց (բառացի՝ ստեց) և Արմենիայում ապօրինություն (բառացի՝ անարդարություն) կատարեց»։ Թե ինչը նկատի ունի արձանագրության բնագիրը, մեզ մոտավոր գաղափար է տալիս Զոնարասի (XII, 19) հետևյալ հաղորդումը։ Վերջինս ասում է, որ Փիլիպպոս կայսրը «հաշտություն կնքելով պարսից թագավոր Շապուհի հետ՝ դադարեցրեց պատերազմը պարսիկների հետ և զիջեց նրանց Միջագետքը և Հայաստանը։ Բայց երբ նա տեսավ, որ հռոմայեցիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով՝ մի փոքր հետո դաշնագիրն անվավեր համարեց և երկիրները ետ վերցրեց»[11]։ Եթե խա-

---

[7] Res gestae, էջ 112։

[8] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1910, էջ 41, 42։ Չպետք է շփոթել Մոսուլից հյուսիս գտնվող Պերոզ-Շապուհի (այժմ Փեշարուր գյուղ) հետ։

[9] Res gestae, էջ 112։

[10] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 83։ Տե՛ս նաև Res gestae, էջ 122։

[11] Տե՛ս Հ. Մանանդյան, նույն տեղում։

դաղության պայմանները հռոմայեցիները խախտել են Փիլիպպոս կայսեր ժամանակ, ապա այդ կարող էր տեղի ունենալ ամենաուշը մինչև 249 թ., երբ Փիլիպպոս Արաբը մահացավ և կայսր հռչակվեց Դեկոսը (249—251)։ Ինչպես տեսնում ենք, Res gestae-ի տվյալները գալիս են ապացուցելու Զոնարասի, Զոսիմոսի և Եվագրիոսի տեղեկությունների ճշտությունը այս դեպքերի մասին և հարկադրում են վերանայել Հակոբ Մանանդյանի ներքոհիշյալ եզրակացությունը. «Աղբյուրների վկայություններից պարզ հրևում է սակայն,— գրում է Հ. Մանանդյանը,— որ Հայաստանը չէր նվաճված Սասանյան Պարսկաստանի կողմից ո՛չ Փիլիպպոս Արաբացու և ո՛չ էլ նրա հաջորդի՝ Դեկոսի ժամանակ (249—251)։ Նա իր անկախությունը պահպանել էր մինչև Գալլոս կայսեր (251—253) ժամանակը»[12]։ Res gestae-ի տեղեկությունները ցույց են տալիս, որ Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև խաղաղությունը խանգարվել էր Փիլիպպոս կայսեր վերջին տարում, առնվազն 249 թ. և նախահարձակը եղել է հռոմեական կողմը։ Ի պատասխան դրան պարսկական բանակը 252 թ. նորից ներխուժեց հռոմեական Ասորիքը և Բարբալիսսոս քաղաքի[13] մոտ չարաչար պարտության մատնեց հռոմեական 60 հազարանոց զորքին։ Այս արշավանքի ժամանակ պարսկական զորքերը գրավել են Ասորիքի, Կիլիկիայի, Կապադովկիայի 37 քաղաքներ, դրանց թվում նաև շքեղ և պերճ Անտիոքը։ Պարսկական զորքերը հասնում են մինչև Փոքր Հայքի հյուսիսային քաղաքները՝ Սատալան (Սատաղ) և Դոմանան և այդպիսով օղակի մեջ է առնվում ամբողջ Մեծ Հայքը։ Այս արշավանքի ժամանակ, հավանաբար, պարսիկները հետապնդում էին մի հիմնական նպատակ. անջատել Մեծ Հայքը հռոմեական կայսրության տերիտորիայից։

Այս դեպքերը տեղի էին ունեցել Գալլոս կայսեր ժամանակ, երբ գոթերը Դանուբի կողմից հարվածում են կայսրության թիկունքին և զրկում հռոմայեցիներին արևելյան սահմանները պաշտպանելու հնարավորությունից։ Ստեղծված պայմաններում Հայաստանը չէր կարող երկար դիմադրել և 251—252 թթ. ենթարկվում է Սասանյան Իրանին։ Ինչպես հաղորդում է Զոնարասը (XII, 21). «Նորից սրա (Գալլոսի) ժամանակ սկսվեցին պարսիկների խլրտումները և նրանք նվաճեցին Հայաստանը. այս երկրի Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից կողմերը»[14]։

Շապուհ Ա-ը նվաճված Հայաստանի թագավոր է նշանակել մի ոմն Արտավազդի[15], որը, ինչպես ճիշտ նշում է Հ. Մանանդյանը, հայ Արշակունիների տոհմից չէր և (գոնե սկզբնական շրջանում) Սասանյան Պարսկաստանի կողմնակից էր ու բարեկամ[16]։ Այս Արտավազդի ով լինելու մասին հայտնվել են զանազան կարծիքներ, որոնցից ճիշտը պետք է լինի Ղ. Ալիշանի ենթադրությունը

12 Տե՛ս Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 84։

13 Բարբալիսսոս քաղաքի քաղաքային տերիտորիան, իրեն «Փոքր աշխարհ» Ասորիքի, հիշատակում է «Աշխարհացույց»-ը՝ «Բալրանիտիս» աղճատված ձևով (Arsène Soukry, Ceographie de Moïse de Corène, Venise, 1881, հայերեն բնագիրը՝ «Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 36։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 44։

14 Տե՛ս Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 84—85։

15 Արտավազդ Ե-ն պիտի թագավորած լինի 252—262 թթ.։

16 Տե՛ս Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 93։

նը, ըստ որի սա Մ. Խորենացու մոտ հիշատակված Արտավազդ Մանդակունին պիտի լինի։ Ստորև կտեսնենք, որ այդ ենթադրությունը հավանական է դառնում Res gestae-ի տվյալների լույսի տակ։ Շատ հավանական է ենթադրել, որ պարսիկների հաղթական արշավանքների առաջն առնելու համար 256 թ. Արևելք է դալիս հռոմեական կայսր Վալերիանոսը (253—260), որը հարկադրում է թշնամուն դատարկել Անտիոքը։ Այնուհետև կայսրը պարսկական զորքերից մաքրեց Կապադովկիան, որպեսզի վերջիններս չմիանան կայսրություն ներխուժած գոթերի հետ, որից հետո միայն օգնության դնաց պաշարված Եդեսիային։ Res gestae-ում Շապուհ Ա-ն հաղորդում է հետևյալը. «Երրորդ արշավանքի ժամանակ, երբ մենք հարձակվեցինք Կարրայի (Խառանի) և Եդեսիայի վրա և պաշարում էինք այդ քաղաքները, Վալերիանոս կեսարը եկավ մեզ վրա»։ Ապա թվում է հռոմեական առանձին երկրամասերի զորքերը, թվով 70 հազար, որից հետո շարունակում է. «Եվ Կարրայի ու Եդեսիայի մոտերքը մենք մեծ պատերազմ ունեցանք [Վալե]րիանոս կեսարի հետ և մենք Վալերիանոս կեսարին դերի վերցրինք և մնացածներին՝ եպարքոսներին, ծերակուտականներին և հեգեմոններին, որոնք այդ զորքի արխոնտներն էին, սրանց բոլորին դերի վերցրինք և տարանք Պարսկաստան»։ Արձանագրությունից իմանում ենք, որ այս երրորդ արշավանքի ժամանակ Շապուհ Ա-ի զորքերը նորից վերագրավել են Ասորիքի, Կիլիկիայի և Կապադովկիայի քաղաքները, հասնելով մինչև Կեսարիա — Մաժակ և Իկոնիա։ Պարսիկների զորքը հակահարված ստացավ հռոմեական զորքից 261 թ. Կիլիկիայի Սոլէ-Պոմպեուպոլիս քաղաքի մոտ, որից հետո սկսեց հետ նահանջել։ Եփրատ գետը անցնելու ժամանակ պարսկական զորքին պարտության մատնեց Պալմիրայի արաբ իշխան Սեպտիմիոս Ոդենատոսը (Օտայնաթ)։ Պարսիկները այստեղ հարկադրված էին թողնել ավարն ու գերիներին։ Այս հաղթանակից հետո Ոդենատոսը իրեն հայտարարեց Պալմիրայի թագավոր և հետզհետե դարձավ Հռոմեական Արևելքի (Ասորիք, Արաբիա. Պաղեստին և Կիլիկիա) ինքնիշխան տեր։ 262—264 թթ. Ոդենատոսը Հռոմի անունից գործելով, շարունակեց պատերազմը պարսիկների դեմ և կարողացավ ազատել պաշարված Եդեսիան, նվաճեց Մծբինը, վերագրավեց հռոմեական Միջագետքը և հաղթական երթը շարունակեց մինչև Տիզբոնի մատույցները։ 266 թ. գոթերի արշավանքը Սև ծովի կողմից կասեցնելուց հետո Ոդենատոսը սպանվում է և նրան հաջորդում է նրա որդին՝ Վաբալլաթը (Վահբ-ալ-Լաթ 266/7—273), բայց փաստական իշխողն էր նրա մայրը, հռչակավոր Զենոբիան (բաթ-Զեբինա կամ Զայնաբ)։

Պալմիրայի թագավորության հզորության այս ժամանակաշրջանում, պատմաբանների որոշ մասի (Մոմզեն, Խալաթյանց, Գեորգ-Ասլան, Սանտալճյան), ենթադրության համաձայն, Հայաստանը նորից ճանաչել էր Հռոմի գերիշխանությունը։ Հակոբ Մանանդյանը իրավացիորեն նշում է, որ այդ ենթադրությունը չի ապացուցվում աղբյուրներով։ Ինչպես ճիշտ նշվում է՝ «Կայսրերի կենսագրություններիս» (Historiae Augustae) մեջ, հայերն այս ժամանակ հիշատակված են այն ժողովուրդների շարքում, որոնք անկախ էին Հռոմից։ «Ուստի և,— շարունակում է նա,— ինձ ավելի հավանական է թվում Գաթրճյանի, Գարագաշյանի և Աննինսկու կարծիքը, որոնք մատնանշում են, որ հայերն այդ ժամանակ շարունակում էին մնալ Պարսից գերիշխանության տակ և Հայաստանում, ինչպես ենթադրում են Ադոնցը և Աննինսկին, դեռ թագավորում էր Արտավազդ

ն-ը (252/3 թվից մինչև հավանորեն 272/3 թիվը)[17]»։ Մի քիչ հետո մեծ գիտնականը իրավացիորեն պնդում է. «Կարելի է հավանական համարել, որ Հայաստանը ինչպես Ոդենատոսի, նույնպես և Զենոբիայի ժամանակ ենթարկված չէ եղել Պալմիրայի իշխանությանը, այլ գտնվել է Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ և վերջինիս հետ միասին դաշնակից է եղել Զենորիային»[18]։ Հ. Մանանդյանի վերևում բերված կարծիքը, սակայն, կարիք ունի որոշ ճշտման։ Այժմ, երբ մեր ձեռքի տակ ունենք Res gestae-ի վկայությունը, կարող ենք վստահորեն ասել, որ ճիշտ չէ այն թեզը, թե իբր Պալմիրայի հզորության ժամանակաշրջանում Հայաստանում շարունակում էր թագավորել Արտավազդ ե-ը։ Res gestae-ն փորագրվել է Վալերիանոս կայսեր գերումից հետո՝ 262 թ., որտեղ երկու անգամ հիշատակվում է իբրև «Արմենիայի մեծ թագավոր»[19] Շապուհ Ա-ի ավագ որդին՝ թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրը։ Շապուհ Ա-ն, Վալերիանոս կայսեր գերումից հետո, ի նշանավորումն այս փայլուն հաղթանակի, մեծ նվիրաբերություններ է անում կրոնական հաստատություններին և հիմնում է մի շարք տաճար-ատրուշաններ իր և իր ընտանիքի անդամների անվան հավերժացման համար։ Res gestae-ում ընդարձակ այդ թվարկումների շարքում կարդում ենք, որ հիմնվել է «մեկ ատրուշան, որ անվանվում է «Խոստրո-Որմիզդ-Արտաքսեյր», ի հիշատակ և ի պահպանումն անվան Որմիզդ-Արտաքսիրի՝ մեծ թագավորի Արմենիայի, մեր որդվո...»։ Շարունակության մեջ ասվում է, որ «Արմենիայի մեծ թագավոր Որմիզդ-Արտաքսարի... և Հորմիզդակ որդվո թագավորին հայոց... հիշատակի [հավերժացման] համար [մատուցվի օրական] մեկ ոչխար, մեկ և կես մոդ հաց, չորս պասոս գինի»[20]։ Այս մեջբերումներից կարելի է եզրակացնել, որ Վալերիանոս կայսեր գերումից հետո՝ 261—262 թթ.[21] միջև Հայաստանի գահը տրվել է Շապուհ Ա-ի ավագ որդի՝ թագաժառանգ Հորմիզդ-Արտաքսարին, կամ հայերեն ձևով՝ Որ-

17 Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 95։

18 Նույն տեղում, էջ 98։

19 Այսպես է հունարեն բնագրում՝ τῶν μεγάλων βασιλέως Ἀρμενίας։ Սակայն հոչակավոր արևելագետ Հենինգը իրավամբ արձանագրության պարսիկ և պահլավիկ վարկածներում ուզում է տեսնել Vazurg Armenān Šah-ընթերցումը, որ համապատասխանում է հույն-հռոմեական և հայ մատենագրության հանրածանոթ «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսին, այդ դեպքում հունարեն վարկածում սպասելի էր տեսնել τῶν βασιλέως Ἀρμενίας μεγάλου. և եթե այսպես չէ, այդ պիտի բացատրել այն շեղումներով, որ նկատելի է հունարեն վարկածում։ Հենինգի ենթադրության անուղղակի ապացույց է իր կողմից բերվող փաստը, որ պարսից արքայից-արքա Ներսեսը (293—302) նախքան իր թագավորելը Հայաստանի թագավոր էր համարվում և Պայկուլիի արձանագրության մեջ կրում է Vazurg Armenān Šāh տիտղոսը (W. B. Henning, A Farewell to the Khagan of the Aq-Aqatārān, Bull. of the Brit. School of Oriental and African Studies, vol. XIV, p. 3. 1952, էջ 517, ծան. 4)։ Ինչպես հայտնի է, Արտաշես Ա-ից (189—161) սկսած Հայկական թագավորության պաշտոնական անունն էր «Մեծ Հայք», իսկ նրա դահակալները մինչև 387 թ. կրում էին «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսը (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 66), ուստի, բնական է, որ հայկական գահը բարձրացած Որմիզդ-Արտաշիրը պիտի կրեր այս տիտղոսը և ոչ թե «Արմենիայի (կամ Հայաստանի) մեծ թագավոր»։ Այս հարցին մենք անդրադառնալու ենք ավելի մանրամասն մի այլ աշխատության մեջ։ Տե՛ս նաև Res gestae, էջ 172, ծան. 1։

20 Res gestae. էջ 40—41, 48, 50։

21 Ըստ Հ. Պերպերյանի Որմիզդ-Արտաշիրը պիտի Հայաստանի կառավարիչ նշանակված լինի 261 թ. («Զվարթնոց», II, 1944, էջ 171)։

միգգ-Արտաշիրին։ Մեզ հայտնի չէ, թե ինչ պարագաներում հեռացվեց հայկական գահից Արտավազդ Ե-ր։ Մենք ունենք միայն մի վկայություն, որից կարելի է կռահել, որ Սասանյան արքունիքը պետք է դժգոհ լիներ նրա վարմունքից։ Տրեբելլիոս Պոլլիոնը պահպանել է մի նամակ, որը, նրա ասելով, ուղարկել է Արտավազդ հայոց թագավորը Շապուհին։ Այդ նամակում հայոց թագավորը արքայից արքային գրում է. «Համակիր եմ քո փառքին, բայց երկյուղ եմ կրում, որ դու ոչ այնքան հաղթել ես, որքան հրահրել ես մոլեգին կռիվը։ Վալերիանոսին այժմ պահանջում են ազատ արձակել և՛ նրա որդին, և՛ թոռը, և հռոմեական զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, ամբողջ Աֆրիկան, ամբողջ Սպանիան, ամբողջ Իտալիան, ու նաև բոլոր ժողովուրդները, որոնք ապրում են Իլլիրիկումում, նաև Արևելքում ու Պոնտոսում, և որոնք կողմնակից են հռոմայեցիներին կամ նրանց հպատակ են։ Դու վերցրիր գերի միայն մի ծերունու, իսկ քեզ դեմ խիստ թշնամացրիր երկրագնդի բոլոր ժողովուրդներին. գուցե նաև մեզ դեմ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր. մենք որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, երբ դուք իրար հետ կռվում եք»[22]։ Այս նամակի բնագիրը, անկախ նրանից, թե այն գոյություն ուներ, թե պատմագիրն է Արտավազդին վերագրում, բոլոր դեպքերում հանդիսանում է իր ժամանակաշրջանի հետաքրքիր փաստաթուղթ։ Այս բնագրից տեղեկանում ենք, որ Մեծ Հայքի թագավորությունը Արտավազդ Ե-ի ժամանակ ներքին կյանքում անկախ էր, և կախվածությունը Սասանյան Իրանից արտահայտվում էր նրանով, որ պատերազմի ժամանակ Հայոց թագավորը օժանդակելու էր օգնական զորքերով։ Ուշագրավ է, որ ժամանակակիցները գիտակցում էին, թե ինչքան ծանր է նստում բուֆեր պետություն Հայաստանի համար ամեն մի պատերազմական ընդհարում Սասանյան Իրանի և հռոմեական կայսրության միջև։ Վերջապես, մեջբերված նամակի տեքստը ցույց է տալիս, որ նույնիսկ եթե սկզբնական շրջանում Արտավազդ Ե-ն համակրել է Սասանյաններին, այս շրջանում նա չի թաքցնում իր համակրանքը հռոմեական կայսրի հանդեպ և նա միայն հարկադրաբար է, որ պաշտպանում է պարսիկների շահերը։

Անշուշտ, հայոց թագավորի այս դիմումը պարսից արքունիքում դիտվել է իբրև անհավատարմության դրսևորում Սասանյան Իրանի ինքնակալի հանդեպ և այդ այն ժամանակ, երբ պարսիկների դեմ Միջագետքում հաջող պատերազմական գործողություններ էր սկսել Հռոմի անունից հանդես եկող Պալմիրայի թագավոր Ոդենատոսը։ Փորձը ցույց էր տալիս, որ եթե քաղաքական հավասարակշռության նժարը Միջագետքում թեքվեր հօգուտ Հռոմի, Հայաստանի գահակալը կարող էր անցնել այն կողմը։ Ահա հանգամանքներ, որ հասկանալի են դարձնում Շապուհ Ա-ի քաղաքական վարքագիծը Հայաստանի հանդեպ Վալերիանոսի գերությունից հետո։ Բացի այս նկատառումներից, հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ Շապուհ Ա-ն այս ժամանակ ապրում էր իր հաղթանակների փայլուն ժամանակաշրջանը։ Երեք փայլուն ճակատամարտերը՝ Պերոզ-Շապուհի, Բարբալիսսոսի և Եդեսիայի, Շապուհ Ա-ին հասցրել էին փառքի գագաթնակետին և նա կարող էր այնուհետև հաշվի չառնել Մեծ Հայքի թագավորության իրավական վիճակը։ Հայկական գահը այս ժամանակ գրավված չէր օրինական թագաժառանգի կողմից և թերևս ոչ-Արշակունի Արտավազդ Ե-ը հաստատվել

22 Տե՛ս Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 93—94։

էր գահին հենց նրա համար, որպեսզի հետագայում հեշտ լիներ նրա փոխարինումը մի այլ շատ ավելի հեղինակավոր հավակնորդի կողմից, ինչպիսին կարող էր լինել Տիգբոնի արքունիքի ներկայացուցիչը։ Ինչևիցե, 261—262 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում գահընկեց է արվել Արտավազդ Ե-ը և «Մեծ Հայքի թագավորի» պատիվը կապել են Շապուհ Ա-ի ավագ որդի թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրի գլխին[23]։ Այդպիսով Տիգբոնի արքունիքը իրագործում էր իր վաղեմի քաղաքական ծրագիրը՝ Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը, ինչպես առաջ Մեծ Հայքը Արշակունիների երկրորդ թագավորությունն էր (Secundogenitur), այժմ այդ նույն դերը վերականգնվում էր, սակայն իբրև Սասանյան դինաստիայի երկրորդ թագավորություն։

Հայաստանի գահը բարձրացած Սասանյան դինաստիայի ներկայացուցիչ Որմիզդ-Արտաշիրը ձգտել է իր թագավորությունը նշանավորել այնպիսի միջոցառումներով, որոնք պիտի երկիրը ավելի սերտ կերպով կապեին Իրանի հետ։ Այդ են վկայում ստորև բերվող փաստերը։

Res gestae-ի վերոհիշյալ վկայությունների լույսի տակ նոր իմաստ է ստանում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի 76-րդ գլուխը։ Պարզվում է, որ այդ մասը, որ պատմահայրը վերցրել է Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոս պատմագրից, հիմնականում ճիշտ է արտացոլում պատմական իրականությունը։ Մովսես Խորենացին, կամ նրա աղբյուրը, լռության են մատնում Վալերիանոսի խայտառակ պարտությունն ու գերությունը և նշում են լոկ այն, որ նա չէր կարող օգնության գալ հայերին, որովհետև այդ ժամանակ «Գունդք անցեալ ընդ Դանուբ գետ զբաղում գաւառս դերի վարեցին, և զԿիւկղադայ կղզիս աւար առին՝ վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թևարկել Վաղերիանոս. նաև ոչ յերկարէ զկեանսն, առնելով ի նմանէ զթագաւորութիւնն Կղաւդիոս (268—270), և յետ նորա Ավրեղիանոս (268—270), հուպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլ և ամսականօք թագաւորեալ Կիւնտ[իղ]ոս (270) և Տակիտոս (275—276) և Փղորիանոս (276) եղբարք։ Վասն որոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ, գերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ»[24]։ Այստեղ հիշվող Սասանյան թագավոր Արտաշիրը ներկայացված է իբրև ժամանակակից Վալերիանոսի և նրանից հետո թագավորած հռոմեական կայսրերի, ուստի նա չի կարող լինել Սասանյան դինաստիայի առաջին արքայից արքա Արտաշիր Ա Պապականը (224—241)։ Res gestae-ի տվյալների լույսի տակ պարզվում է, որ այս Արտաշիրը նույն Որմիզդ-Արտաշիրն է, սակայն Մովսես Խորենացին սրան նույնացնում է Արտաշիր Ա Պապականի հետ և, ինչպես տեսանք, ժամանակակից է դարձնում հռոմեական այն կայսրերին, որոնք թագավորում էին արքայից արքա Հորմիզդ Ա-ի ինքնակալության տարիներին (272—273), իսկ Res gestae-ից պարզվում է, որ վերջինս նույն Որմիզդ-Արտաշիրն է, որը նախքան

23 Եթե Արտավազդ Ե-ը գահընկեց է արվել և 261—262 թթ. միջև Հայաստանի թագավոր է նշանակվել Որմիզդ-Արտաշիրը, որը Trebellios Pollion-ի մոտ (Vita Valer, VI, ed Nisard, էջ 43, ծան. 2) հիշատակվում է Որոմազդէս ձևով, ապա անհիմն է Հ. Պերպերյանի ենթադրությունը, թե «Արտավազդ» անունը կարող է ձեռագրական վրիպակ լինել «Որոմազդէս» անվան։

24 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», II, ԼԶ, էջ 214—215։

իր հոր՝ Շապուհ Ա-ի մահը (272 թ.) Մեծ Հայքի թագավորն էր։ Այս դեպքում և Մովսես Խորենացու մոտ շփոթությունը առաջացել է համանման անունների պատճառով։

Պատմահայրը հաղորդում է, որ Հայաստանը նվաճելուց հետո Արտաշիրը լսել էր, թե հայ նախարարներից մեկը «առեալ զմի յորդւոցն Խոսրովայ, փախուցեալ ապրեցոյց, ի դուռն կայսեր հասուցանելով։ Եւ քննեալ թէ ո՛վ ոք նա իցէ՝ եղև վերահասու, թէ նա է Արտաւազդ յազգէն Մանդակունեաց. հրամայեաց զամենայն ազգն ջնջել սատակմամբ։ Քանզի ի գաղթելն Հայոց յԱրտաշրէ՝ դաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն և ի նուաճելն Արտաշրի զայլսն՝ դառնան և նոքա, և սատակին սրով ամենեքին»[25]։ Շատ հավանական է, որ Արտավազդ Ե-ը մեղադրվել է պետական դավաճանության մեջ և իբրև կողմնակից հայ Արշակունիների ժառանգական իրավունքների՝ ենթարկվել է մահապատժի և նրա հետ միասին բնաջինջ է արվել նաև Մանդակունյաց նախարարական ամբողջ տոհմը։

Այժմ, երբ պարզվում է Մովսես Խորենացու վկայությունների Արտաշրի նույնությունը res gestae-ի Որմիզդ-Արտաշիրի հետ, հասկանալի է դառնում երկրորդ գրքի ՀԷ գլուխը, վերնագրված՝ «Յաղագս խաղաղութեան Պարսից և Յունաց, և շինելոյ Արտաշրի զՀայս յամս անիշխանութեանն»։ Այս գլխում Արտաշիրը ներկայացված է իբրև երկրի շինարար, որը ձգտում է ընդհանուր լեզու գտնել նախարարների հետ և միևնույն ժամանակ նախադրյալներ ստեղծել Հայաստանի պարսկացման համար։

Մովսես Խորենացին, անդրադառնալով այդ հարցին, հաղորդում է՝ «Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր»[26]։ Որմիզդ-Արտաշիրի միջոցառումներից հիշատակվում են.

ա) Հաշտարար քաղաքականություն ֆեոդալականացող հայ ավագանու՝ նախարարների հետ։ Պատմագրի ասելով՝ «Եւ Արտաշրի նուաճեալ զազգն նախարարացն՝ զգաղթեալսն անդրէն դարձուցանէ, և զամրականսն ի վայր իջուցանէ»[27]։

բ) Հանդուրժողական քաղաքականություն Արշակունի սեպուհների-ոստանիկների հանդեպ. «Նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ոռճկօք, որպէս և էինն»[28]։

գ) Կարգավորում է հարկային քաղաքականությունը, որի նպատակով անց է կացվում աշխարհագիր, համաձայն երկրի վարչական բաժանման. «Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենևիմբ զիւր անունն հաստատէ»[29]։

դ) Աշխարհագրի հետ սերտ կապված էր նոր հողաբաժանումը և կալվածատիրական սահմանների վերանայումն ու կարգավորումը։ Որմիզդ-Արտաշիրը վերացնում է հին սահմանաքարերը, որոնք գալիս էին Արտաշիսյանների ժամանակաշրջանից և կոչվում էին «Արտաշիսական», և նրանց փոխարեն տրնկում է նորերը, որոնք Սասանյան դինաստիայի հիմնադրի անունով կոչվում են

25 Նույն տեղում, էջ 217։
26 Նույն տեղում, II, ՀԷ, էջ 215։
27 Նույն տեղում։
28 Նույն տեղում, էջ 216։
29 Նույն տեղում։

«Արտաշիրական»։ Հայ Արշակունիները իրենց համարում էին Արտաշիսյանների ժառանգներ, ուստի նրանց իշխանության ժամանակաշրջանում ևս սահմանաքարերը շարունակում են կոչվել «Արտաշիսական», իսկ Սասանյանները Հայաստանում հանդես էին գալիս իբրև նոր դինաստիայի ներկայացուցիչներ, այն էլ օտարերկրյա։ Մովսես Խորենացու վկայությամբ՝ Արտաշիրը «զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զԲարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, և յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»[30]։

Ե) Հետաքրքիր է Որմիզդ-Արտաշիրի քաղաքականությունը կրոնի և գաղափարախոսության բնագավառում։ Պատմագրի ասելով, Արտաշիրը «զմեհենիցն պաշտպամունս առաւել ևս յորդորէ. այլ և զհուրն Որմզդական, որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել։

Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեաց հանդերձ Արեգակամբ և Լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր»[31]։ Այստեղից տեսնում ենք, որ Որմիզդ-Արտաշիրը ձգտում էր վերացնել Հայաստանում գերիշխող սինկրետիկ հայկական հելլենիստական պանթեոնը և երկրում ներմուծել զրադաշտականությունը, որը Սասանյան Իրանում վերջնականապես ձևավորվել էր և մեծ հեղինակություն էր վայելում պարսկական արքունիքում։ Սակայն հելլենականությունը Հայաստանում այնքան խոր արմատներ էր ձգել, որ III դարի պայմաններում Սասանյանների այդ քաղաքականությունը Հայաստանում միայն արագացրեց քրիստոնեական կրոնի հաստատումը։ Վերոհիշյալ վկայությունը հետաքրքիր է նաև այն տեսակետից, որ կռապաշտությունը և կուռքերը սկսել են վերացնել Հայաստանում դեռևս քրիստոնեական կրոնի հաստատումից առաջ։ Այս քաղաքականության նպատակն էր արմատախիլ անել Հայաստանում հաստատված հելլենիստական մշակույթը, որը դարերի ընթացքում մերվել էր տեղական հայկական հնավանդ սովորությունների ու կենցաղի հետ։ Սասանյանների հակահելլենիստական քաղաքականությունը Հայաստանում նպաստեց այն գաղափարական ճգնաժամի ավելի խորացմանը, որ համակել էր ամբողջ հռոմեական կայսրության ազգաբնակչությանը և տարածվել դեպի Առաջավոր Ասիայի երկրները։ Ստեղծված պայմաններում քրիստոնեական կրոնի քարոզիչների գործունեությունը ավելի պարարտ հող գտավ Մեծ Հայքում։ Հայկական ֆեոդալականացող ավագանին չէր կարող համակրել հայերի համար արդեն խորթ դարձած, նորից բարձրացող իրանական զրադաշտականությունը։ Ստեղծված պայմաններում քրիստոնեությունն էր, որ զորեղ գաղափարական զենք կարող էր դառնալ երկրի ինքնուրույնությունը իրականացման վտանգից պահպանելու համար։

Եթե մենք փորձենք տալ Մեծ Հայքի թագավորության գահակալների հաջորդականությունը «ի ժամանակս անիշխանութեանն», այսինքն՝ 237—287 թթ. միջև, կստանանք հետևյալ պատկերը։

237 թ. Անակի ձեռքով սպանվեց Խոսրովը։ Արտավազդ Մանդակունին պատանի գահաժառանգ Տրդատ Արշակունուն փախցրեց հռոմեական կայսրության սահմանները։

---

30 Նույն տեղում։
31 Նույն տեղում։

245—252 թթ. Տրդատ Ը որդի Խոսրովի՝ թագավոր Հայոց Մեծաց։

252 թ. Տրդատ Ը-ը վերստին ապավինում է հռոմեական կայսրության սահմանները։

252—262 թթ. Արտավազդ Ե՝ թագավոր Հայոց Մեծաց։

262—272 թթ. Որմիզդ-Արտաշիր (Հորմիզդ-Արտաքսար)՝ թագավոր Հայոց Մեծաց, ապա Որմիզդ Ա անվան տակ՝ արքայից արքա Իրանի (272—273)։

272—293 թթ. Ներսեհ՝ թագավոր Հայոց Մեծաց (Vazurg Armenan Šah ըստ Պայկուլիի արձանագրության), ապա արքայից արքա Իրանի (293—302 թթ.)։

Միաժամանակ Դիոկղետիանոսի օժանդակությամբ՝ Մեծ Հայքի հռոմեական մասում 287 թ. նորից դահ բարձրացավ իբրև «թագաւոր Հայոց Մեծաց» Տրդատ Ը-ը, որը ոենքով նվաճեց Սասանյանների դավթած Մեծ Հայքը։ 298 թ. Մծբինի դաշնագրից հետո Սասանյանների կողմից ևս Տրդատը ճանաչվեց ամբողջ Մեծ Հայքի թագավոր, իսկ 301 թ. մոտերքը քրիստոնեությունը պաշտոնական կրոն հայտարարելուց հետո ստացավ «Մեծ» մականունը։

ДАННЫЕ НАДПИСИ «КААБА и ЗАРДУШТ» ОБ АРМЕНИИ

Академик АН Арм. ССР С. Т. ЕРЕМЯН

(Резюме)

Обнаруженная в 1936—39 гг. большая трехязычная надпись (условно называемая «Res gestae divi Saporis»), высеченная на стенах здания «Кааба и Зардушт» около знаменитой скалы Накши-Рустам севернее Персеполя, представляет большую ценность для исторической науки. Вокруг расшифровки и публикации этой надписи за прошедшие годы появилась обширная литература. В статье автор останавливается лишь на данных об Армении по греческой версии надписи.

Надпись высечена около 262 г. и содержит сведения, которые показывают историчность основных положений, изложенных в 71—79 главах II книги «Истории Армении» Мовсеса Хоренаци. Упомянутые главы повествуют об истории Армении III столетия н. э., о которой до нас дошли скудные сведения.

В свете данных «Res gestae divi Saporis» упоминаемый в 76-й главе II книги «Истории Армении» Мовсеса Хоренаци воцарившийся в Армении Арташир был старшим сыном сасанидского царя Шапура I. В надписи он значится как «великий царь Армении» Ормизд-Арташир, который должен был устранить с престола назначенного до него царем Армении Артавазда V.

Установление идентичности упомянутого Арташира с Ормиздом-Арташиром делает понятной 77-ю главу II книги «Истории Армении» Мовсеса Хоренаци, озаглавенную «О мире между персами и греками и о

строительной деятельности Арташира в годы безвластия». В этой главе Арташир, т. е. Ормизд-Арташир, представлен как строитель страны, который стремится найти общий язык с нахарарами. В то же время показывается, что вся его деятельность была направлена на создание предпосылок для усиления политического влияния Ирана в царстве Великой Армении.